ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի(այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածով սահմանվում է պատգամավորի պարտականությունները: Պատգամավորի պարտականություններում առանցքային դեր ունի պատգամավորական էթիկայի կանոնների պահպանումը, քանի որ այդ կանոնների պահպանման դեպքում միայն հնարավոր կլինի ձևավորել ՀՀ Ազգային ժողովի նկատմամբ վստահություն և հարգանք: «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է պատգամավորական էթիկայի կանոնները, որոնց պարտավոր է հետևել պատգամավորը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի գործող կարգավորմամբ ժամանակավոր հանձնաժողով կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը:

7-րդ գումարման Ազգային ժողովում երեք նստաշրջանների ընթացքում որևէ ժամանակավոր հանձնաժողով չի ձևավորվել, այդ թվում՝ պատգամավորների էթիկայի և շահերի բախման հարցերի առնչությամբ:

7-րդ գումարման 3 նստաշրջանների ընթացքում ԱԺ-ն որևէ էթիկական հարցի չի անդրադարձել, որևէ վարույթ չի իրականացրել: Դա այն պարագայում, երբ մի քանի առանցքային հարցերի շուրջ խորհրդարանական քննարկումներ չափազանց բուռն ընթացք են ունեցել՝ ուղեկցվելով էթիկական նորմերի խախտումներով կամ այնպիսի դրսևորումներով, որոնք առնվազն պատգամավորի վարքականոնի խախտման հավանականության առումով քննարկման առարկա կարող էին դառնալ:

Էթիկայի հանձնաժողովի ձևավորման պրակտիկայի փաստացի բացակայությունը պայմանավորված է էթիկայի նորմերի պահպանման նկատմամբ հսկողության և էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու համար սահմանված իրավական այնպիսի համակարգով, որը գործնականում անհնար է դարձնում այս ինստիտուտի կայացումը գործող խորհրդարանում:

Էթիկայի նորմերի հնարավոր խախտման դեպքով վարույթի հարուցումը քաղաքականացված է՝ ժամանակավոր հանձնաժողովի կարգավիճակ տալու մոտեցմամբ պայմանավորված նման հանձնաժողով կարող է ստեղծվել միայն ԱԺ խմբակցությունների նախաձեռնությամբ, ընդ որում՝ սահմանված չեն վարույթ հարուցելու կամ հարցը քննության առարկա դարձնելու իրավական չափորոշիչները:

«ԱԺ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով հանձնաժողովի ձևավորման և գործունեության արդյունքում կազմված եզրակացությունը որևէ կարգապահական կամ այլ բնույթի պատասխանատվության միջոցի կիրառման չի հանգեցնում, անգամ ԱԺ-ում քննարկման առարկա չի դարձվում և ընդամենը տեղադրվում է ԱԺ պաշտոնական կայքում: Սա կարծում ենք օրենսդրական բաց է, քանի որ պատգամավորին պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը գործուն չի լինում:

6-րդ գումարման ՀՀ ԱԺ-ում պատգամավորական էթիկային վերաբերող հարցերը քննարկման առարկա չեն դարձել, թեպետ առաջին 2 նստաշրջանի ընթացքում վարույթ հարուցելու տեղիք տվող դեպքեր և իրավիճակներ խորհրդարանում եղել են: Հիմնական պատճառը ԱԺ կանոնակարգ-օրենքով սահմանված նոր իրավակարգավորումներն են, որոնք զգալիորեն բարդացրել էին էթիկական խախտումները քննության առարկա դարձնելու և կարգազանց պատգամավորների վարքագծի վրա ներազդելու գործընթացը: Էթիկական նորմերի պահպանման մշակույթն ու պատասխանատվության գիտակցումն ամրապնդելու փոխարեն ընտրվել է ինստիտուտի կարևորությունը նվազեցնելու, դերակատարումը փոքրացնելու ուղին: Ըստ էության՝ ԱԺ խմբակցություններին է վերապահվում էթիկայի արձանագրված խախտումները ժամանակավոր հանձնաժողովի մակարդակով քննարկման առարկա դարձնելու կամ չդարձնելու իրավասությունը: Ընդ որում՝ նախորդ գումարման խորհրդարանում էթիկայի հանձնաժողովները հարցը վարույթ ընդունելիս առաջնորդվում էին կոնկրետ չափորոշիչներով. ԱԺ նախկին կանոնակարգ-օրենքը հստակ սահմանում էր, թե որ դեպքերում է հանձնաժողովն իրավասու մերժել ներկայացված դիմումը: Մինչդեռ գործող իրավակարգավորումներով չափորոշիչներ չեն սահմանվում, ինչն ընդլայնում է հայեցողականության շրջանակը:

Միջազգային փորձ: Եվրոպական զարգացած երկրներից շատերում պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողովները ունեն մշտական բնույթ: Մեծ Բրիտանիայում Բարեվարքության կանոնների հանձնաժողով[1] է գործում: Նախատեսված պատժամիջոցները հետևյալն են՝ 2012 թվականին ընդունված օրենսգրքին չենթարկվելու դեպքում (19-րդ և 20-րդ կետեր), խորհրդարանի նախագահը կարող է պատրաստել հիմնավորված հայտարարություն: Լուրջ կամ կրկնակի էթիկայի կանոնների խախտումների դեպքում Նախագահը կարող է ձեռնարկել մեկ կամ մի քանի միջոցառում՝ խոսքի

[1] https://committees.parliament.uk/committee/402/conduct-committee/

իրավունքի ժամանակավոր զրկում, փոփոխություններ, միջնորդություն ստորագրելու իրավունքի ժամանակավոր զրկում:

Հունաստանի Հանրապետությունում Խորհրդարանական էթիկայի մշտական հատուկ հանձնաժողով է գործում, որը ուսումնասիրում է, միջամտում է, հրապարակային հանդես է գալիս խորհրդարանի և պատգամավորների պաշտպանության նպատակով:

Պատգամավորի կողմից խախտում արձանագրելու դեպքում մշտական հանձնաժողովը քննում է հարցը և առաջարկություններ (հանձնարարականներ) ներկայացնում: Եթե պատգամավորը չի հետևում Հանձնաժողովի առաջարկներին(հանձնարարականներին)՝ նրա հանդեպ կարող են կարգապահական (դիսցիպլինար) միջոցներ կիրառվել: Եթե որոշում է ընդունվում կարգապահական տույժ կիրառելու մասին՝ ապա խոսնակը իրավունք ունի այս որոշումը բարձրաձայնել լիագումար նիստի ընթացքում կամ խորհրդարանական արձակուրդի ընթացքում:

Վրաստանի Հանրապետությունում Էթիկայի խորհուրդը Էթիկայի նորմերի խախտումն ուսումնասիրում է իր նախաձեռնությամբ կամ հայտի հիման վրա: Հայտ կարող է ներկայացնել պատգամավորը, ինչպես նաև այն անհատը, ով համարում է, որ իր հանդեպ տեղի է ունեցել Էթիկայի կանոնագրքի դրույթների խախտում: Հայտը ստանալուց հետո այն պատգամավորն, ում հանդեպ ներկայացված է բողոքը, անմիջապես տեղեկացվում է և նրան տրվում է 10 օր բացատրություն ներկայացնելու համար: Ժամկետի երկարաձգում հնարավոր է հիմնավորված հայտի հիման վրա՝ 5 օրով: Պատասխան ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո Էթիկայի խորհուրդը մեկամսյա ժամկետում կատարում է ուսումնասիրություն, որի ավարտից հետո խորհրդարանի կայքում տեղադրվում է խախտում կատարած պատգամավորի (պատգամավորների) անունները և խախտման հակիրճ նկարագրությունը: Էթիկային խորհուրդը կարող է խորհրդարանի անդամին դիմել հանձնարարական քարտով (recommendation card): Եթե Խորհուրդը պարզում է, որ խախտում տեղի չի ունեցել՝ ապա որոշումը հրապարակվում է խորհրդի կայքում, որպեսզի դիմում ներկայացրած անձը և պատգամավորը տեղյակ լինեն ընդունված որոշման մասին:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխության և լրացման արդյունքում՝ ՀՀ ԱԺ նախագահը իրավասություն կունենա ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով հանձնաժողովի եզրակացության հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկել «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված էթիկայի կանոնները խախտած պատգամավորին: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը լրացվել է 19.3.-րդ հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն

հանձնաժողղովի եզրակացությունները կհրապարակվեն ՀՀ ԱԺ նիստում: Կընդլայնվեն ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով հանձնաժողովի լիազորությունները, մասնավորապես փոփոխություններ են կատարվել Օրենքի 17-րդ հոդվածում:

Նոր կարգավորմամբ երկարացվել է ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով հանձնաժողովի գործունեության ժամկետը, ընդլայնվել են դիմողների շրջանակը, հստակեցվել դիմումին ներկայացվող պահանջները, հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը: Օրենքի 19.3.-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվել է, թե որ դեպքում է էթիակայի հանձնաժողովը մերժում դիմումի քննարկումը, որը ապահովում է իրավական որոշակիություն:

Նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը դարձնել ավելի գործուն՝ բացառելով հանձնաժողովի ձևավորման կախվածությունը քաղաքական որևէ ուժից:

Միևնույն ժամանակ նշենք, որ սա միջանկյալ լուծում է, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ ԱԺ էթիկայի հարցերով հանձնաժողովը ժամանակավոր բնույթ ունի:

Հաշվի առնելով, որ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը մշակում է ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենսդրական փաթեթ, ներկայացրել ենք մեր առաջարկը, որը հնարավորություն կտա տարանջատել էթիկայի հանձնաժողովը ժամանակավոր հանձնաժողովների գործունեությունից: